



ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ

ՀԱՆԴԵՍ

ԾԿԷ ՏԱՐԻ

2009

ՈՒԽԸ · ՈՒԽԹ

ՎԵՆԵՏԻԿ · Ա. ՂԱԶԱՐ

BAZMAVEP

REVUE D'ÉTUDES ARMÉNIENNES

FONDÉE EN 1843

Vol. CLXVII

2009

SAINT-LAZARE
VENISE

**ԱՆՏԻԿ ԱԻԱՆԴՈՅԹՆԵՐԻ ՎԵՐԱՊՐՈՒՄՆԵՐԸ
ՄԼՔԻ ԹԱԳՈՒՀՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻ
ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ**

Հայկական լաւագոյն նկարազարդ մատեաններից մէկը, որ յայտնի է որպէս Աւետարան Մլքէ թագուհու, պահում է վենետիկի սր. Ղազար կղզում, Մխիթարեան միաբանութեան գրադարանում (№ 1144):¹ Աւետարանը թուագրուում է 862թ-ով եւ հանդիսանում է ամենավաղ թուակիր մատեանը²: 1830թ. այն նույրաբերուել է Մխիթարեան գրադարանին, իսկ մինչ այդ գտնուել է Ախալցխայում³: ի սկզբանէ, համաձայն յիշատակարանի, ձեռագիրը երկար ժամանակ գտնուել է վասպուրականի սր. Նշան վանքում ու պատկանել է Գագիկ Արծրունու կնոջը՝ Մլքէ թագուհուն եւ պատմականօրէն կապուել վերջինիս անուան հետ: Հաշուի առնելով այս եւ մի շարք այլ հանդամանքներ՝ ընդու-

¹ ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. ԲԱՐՄԵՂ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատեանդարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 1, Վենետիկ, 1914, էջ 374:

² Աւետարանի թուագրման խնդիրը մասնագիտական գրականութեան մէջ քըննարկուել է: Տե՛ս ԱԴՈՆՅ Ն., Մլքէի աւետարանի գրութեան տարին, "Միոն", 1936; ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ, Մլքէի աւետարանին թուականը, "Բագմակէպ", հ. 3-5, 1939:

³ Ձեռագիրը ունի շատ հարուստ պատմութիւն: Ամենավաղ յիշատակումները պատկանում են Գագիկ Արծրունուն եւ Մլքէին, որտեղ խօսւում է Վարագայ սր. Նշանին Աւետարանը նույրաբերելու մասին: Մատեանը մէկ անդամ է, որ գերուել է. 1208 թ. վերադարձուել է Վարագայ սր. Նշան վանքին, յաջորդ անդամ ժդ. դ. ետ է վերադարձուել ու վերակազմուել. 1682 թ. հայերի կողմից ետ է գնուել մենգրելներից ու նույրաբերուել Քութախսի սր. Աստուածածին եկեղեցուն. վերջին նշումները արուել են 1830 թ., երբ Գ. Նեփիսեանցի կողմից այն յանձնուել է վենետիկի Մխիթարեան միաբանութեան գրադարանին: Մանրամասները տե՛ս ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. ԲԱՐՄԵՂ (1914), էջ 380. ՅՈՎԱԿԻՓԵԱՆ Գ., Ֆիշատակարանն ձեռագրաց, հ. 1, ԱՆԹԻՒՄԱ, 1951, էջ 107; ՃԱՆԱՇԵԱՆ Մ., Հայկական մանրամարչութիւն, Վենետիկ, 1970, էջ 59-70.

նուած է համարել, որ Աւետարանը ընդօրինակուել ու նկարագրուել է հէնց Վասպուրականում:

Մլքէի աւետարանի չափսերն են 35x29,5 սմ⁴, սակայն պէտք է հաշուի առնել այն, որ ձեռագիրը մի քանի անգամ վերակազմուել է, թերթերը եղրահատուել են եւ կրկնակի անգամ համարակալուել⁵: Տեքստը գրուած է երկաթագրով, բացակայում են Աւետարանների սկիզբը ձեւաւորող գլխազարդերը, գլուխները սկսում են պարզագոյն գլխատառերով⁶:

Ձեռագիրն ունի տասնմէկ մանրանկար էջ, որ կազմում են առաջին տեսրը՝ ներկայացուած հետեւեալ կարգով. երեք թերթ Եւսերիոս կեսարացու նամակը, երեք համաբարբառի կանոններ (1-4), Համբարձման տեսարանը եւ չորս աւետարանիչների պատկերները: Ակնյայտ է, որ Աւետարանն ունի պակաս թերթեր, չնայած, որ ընդհանուր առմամբ մատեանը լաւ է պահպանուած: Մասնաւորապէս չի պահպանուել խորանների երկրորդ մասը՝ երկու թերթ համաբարբառի կանոններով (5-10), իսկ Տօնական շարքը ներկայացուած է մէկ մանրանկարով՝ Համբարձման տեսարանով, որը արդէն իսկ մատնանշում է պատկերաշարի ոչ ամբողջական լինելը: Սա են հաստատում ձեռագրագիտական տուեալները⁷: Կորստեան հետքերն առկայ են պահպանուած վերջին խորանի եւ միակ Տէրունական մանրանկարի միջեւ, իսկ Համբարձման տեսարանը եղել է վերջին պատկերը Քրիստոսաբանական շարքում, քանզի նրա հակառակ կողմում Մատթէոս աւետարանը՝ պատկերն է: Այս իմաստով մեծ յաջողութիւն է, որ յիշատակարանում, բացի Աւետարանի ստեղծման տարբեթուից, նշուած է նաեւ թերթերի ընդհանուր քանակը՝ 466: Համադրելով պահպանուած եւ նախնական թերթերի քանակը⁸, կարելի է վստահօրէն

⁴ Տուեալները ձեռագրի մասին հիմնակամում համընկնում են (Սարգսեան, Ճանաչեան, Սթոռուն), սակայն ըստ Թ. Մեթիւզի տուեալների դրանք փոքր ինչ տարբերում են՝ 33.5x28: Տե՛ս Mathews T., Orna M. Four Manuscripts at San Lazzaro, Venice // Revue des Etudes Arménienes, Paris, 1992, T. 23. P. 528.

⁵ ՃԱՆԱՇԵԱՆ Մ., (1970), էջ 59:

⁶ Stone M., Kouymjian D., Lehmann H. Album of Armenian Paleography. Aarhus University Press, 2002, P. 374.

⁷ Mathews T., Orna M. (1992), P. 528.

⁸ Աւետարանի թերթերի ուշ համարակալումը արուած է արաբական թուանշաններով ու կազմում է 455 թերթ՝ առանց մանրանկարների: Բացի այդ յաւելեալ նշումներից իմանում ենք նաեւ մէկ կորցուած պահպանակի մա-

ասել, որ առաջին տեսրից պակաս են չորս թերթ, որոնցից երկուսը (թերթերի երկու կողմերն էլ) պէտք է լինէին համարարբառի կանոններով, իսկ երկուսը՝ Տէրունական մանրանկարներով:

Մլքէի աւետարանը ընդհանուր առմամբ յայտնի է գիտական շրջանակներում: Նրան են անդրադարձել այնպիսի գիտականներ, ինչպիսիք են Յ. Ստրիփովսկին, Ֆ. Մաքլերը, Կ. Վայցմանը, Ա. Տէր-Ներսէսեանը, Ա. Սվիրինը, Վ. Լազարեւը եւ ուրիշներ: Սակայն գիտական գրականութեան մէջ ձեռագրի մասին խօսուել է վաղքրիստոնէական եւ հայկական արուեստի ընդհանուր համատեքստում եւ շատ կարեւոր տեսանկիւններ դուրս են մնացել ուշադրութեան կենտրոնից: Մինչդեռ Մլքէի աւետարանը մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում: Կարեւոր է այն փաստը, որ ձեռագիրը ունի ստոյգ թուագրութիւն: Բացի այդ, իր մի շարք առանձնայատկութիւններով ու գեղարուեստական բնութագրով այն առնչում է ուշ անտիկ եւ վաղքրիստոնէական աւանդոյթների հետ: Իսկ հայ արուեստի պատմութեան մէջ այն, կարելի է ասել, եզակի է, քանի որ չունի նմանօրինակը ու չի յարում եւ ոչ մի մեզ յայտնի գեղարուեստական դպրոցի կամ ուղղութեան:

Մանրանկարների շարքը սկսւում է Եւսեբիոսի նամակով, ներկայացրած միակամար խորաններում: Առաջին խորանը (թ. 1ա) շատ հանդիսաւոր է, յատկապիս վերեւի մասը՝ կամարը, որ յարդարուած է ծիածանազարդով ու զոյգ արքայական թուուններով սիրամարգերով: Առաջին խորանի, որ նաեւ հանդիսանում է Աւետարանի խորհրդաբանական մուտքը, նման յարդարանքը

սին: Այսպիսով, իմանալով թերթերի նախնական քանակը կարելի է հաշուել պակասող թերթերը, որ կազմում են 466: Տե՛ս ՃԱՆԱԾԵԱՆ Մ., (1970), էջ 60:

⁹ Հիմնական աշխատանքներն են. ԱՏՐԺԻԳՈՎԱԿԻ Յ., Զարդարանք Աւետարանի Մլքէ բազուհու, "Հանդէս Ամսօրեայ", հ. 2, 1905; Macler F. Notices de manuscrits arméniens vues dans quelques bibliothèques de l'Europe centrale, Paris 1913; Friend A. M. The Portraits of the Evangelists in Greek and Latin Manuscripts // Art Studies. Medieval, Renaissance and Modern. An extra number of the American Journal of Archaeology, 1927, P. 26-28; Weitzmann K. Armenische Buchmalerei des 10. und Beginnenden 11. Jahrhunderts. Bamberg, 1933; Свирип А. Н. Миниатюра древней Армении. М.-Л., 1939. С.28-29; Дурново Л. А. Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957. С.16-17; ՃԱՆԱԾԵԱՆ Մ., (1970), էջ 59-91. Լազարեվ В. Н. История византийской живописи. М., 1986. Т. 1. С. 59, 83; Der-Nersessian S. L'art Arménien. (reprint) Paris, 1989. P. 80-81 եւ այլն:

աւանդական էր յատկապիս վաղ ձեռագրերի համար, ինչպէս հայկական, այնպէս էլ արեւելաքրիստոնէական ու բիւզանդական¹⁰:

Նամակի յաջորդ երկու խորանները, որ ներկայացուած են հանդիպակաց էջերին (թթ.1բ-2ա), նոյնանում են նախորդի հետ, միեւնոյն ժամանակ աւելի են յագեցած յօրինուածքի առումով: Միւները աւելի գեղակազմ են՝ պակուած հարուստ կորնթական խոյակներով: Առաւել յատկանշական են խորանների կամարամահիկները (լիւնետները), որտեղ պատկերուած են նեղոսեան տեսարաններ: Ներկայացուած է հարուստ ջրային բնապատկեր՝ կոկորդիլոսներ, ձկներ, ջրաշուշաններ, ինչպէս նաեւ փոքր նաւակներով ձկնորսներ, գետափին՝ եղէքնուտ: Այս զուգահեռաբար ներկայացուած տեսարանները չնչին տարբերութեամբ կարծես մի մեծ յօրինուածքի առանձին դրուագներ լինեն:

Այսպէս կոչուած նեղոսեան տեսարանները լայն կիրառում են ունեցել յատկապիս ուշ անտիկ արուեստում տարածուելով իտալիայից մինչեւ հիւսիսային Աֆրիկա¹¹: Կ. Վայցմանը Մլքէի այդ տեսարաններին որպէս զուգահեռ նշում է հիւսիսային Աֆրիկայի մի խճանկար (Դիոնիսի Յաղթանակի տունը, Գ. դ. սկիզբ), որ գտնւում է Սուս քաղաքի թանգարանում¹²: Պատկերների այս շարքը կարելի է լրացնել Ե-կ. դ. ք. քրիստոնէական յատկի խճանկարներով¹³: Անկասկած է, որ հէնց ուշ անտիկ եւ վաղքրիստոնէական խճանկարների պատկերագրութիւնից են վերցուած նեղոսեան տեսարանները, որոնք մասնագէտները կապում


¹⁰ Բարուլալի աւետարանը 586 թ., Plut I, 56, Ֆլորենցիայի Լաուրենցիանի գրադարան (թ.1բ). Մլքէի աւետարանը 862 թ., №1144, Վենետիկի Միթթարեան միաբանութեան գրադարան (թ.1ա); էջմիածնի աւետարանը 989ր., №2374, Մատենադարան (թ.1ա). Աւետարան Ժ-ԺԱ. դ. գ. № 697, Վիեննայի Միթթարեան միաբանութեան գրադարան (թ. 1ա); յունական Աւետարան Ժ. դ. Gr.I, 8, Վենետիկի Մարչիանայի գրադարան (թ. 2ա):

¹¹ Hamarneh B. The River Nile and Egypt in the Mosaics of the Middle East // The Madaba Map Centenary, Jerusalem, 1999. P. 185-189.

¹² Weitzmann K. (1933). Abb. 2.; Kolpinskij Ju. D. Iakusstvo ehtruskov I drevnego Rima. M., 1983, II. 100 (բ).

¹³ Բեյս Շենանի (Լիոնտիսի տունը), էլ-Տարգայի Հացի եւ ձկների բազմացման եկեղեցու (Ե. դ.), Գեռասայի սրբ. Պօլու եւ Պետրոս եկեղեցու (Զ. դ. Առաջին կէս) ու Ում ալ-Խասայի (Հ. դ.) եւ այլ յատկի խճանկարներ: Տե՛ս Hamarneh B. The River Nile and Egypt in the Mosaics of the Middle East // The Madaba Map Centenary, Jerusalem, 1999, P. 185-189.

Են ալեքսանդրեան հելլենիզմի աւանդոյթների հետ¹⁴: Կարծում ենք, որ նեղոսեան տեսարանները տեղ ունէին ոչ միայն խճանկարների, այլեւ վաղ ձեռագրերի պատկերաշարում: Վաղ կոդեքսների վատ պահպանուածութիւնը կամ պարզապէս բացակայութիւնը հնարաւորութիւն չի տալիս ուղղակի գուգահեռներ գըտնել, սակայն աւելի քան ակներեւ է հայկական ձեռագրի առնչութիւնը նմանատիպ յուշարձանների հետ:



Եւսերիոս Կեսարացու Ամամակի վերջը (խորան 3-րդ), թ. 2ա

¹⁴ Լազարև Վ. Խ. (1986). Տ. 1. Ը. 27.

Եթէ անդրադառնանք հայկական ձեռագրերին, ապա Մլքէի աւետարանը միակը չէ, որտեղ կան նեղոսեան տեսարաններ: Այս տեսարանը առկայ է Անիի դպրոցին վերագրուող Մողնու աւետարանում (ԺԱ դ. կէս): Այստեղ՝ չորրորդ խորանում, տեսնում ենք ձկնորսներով նաւակ, կոկորդիլոս, ձուկ եւ մեղուզա, ինչպէս նաեւ ջրային թռչուններ¹⁵: Վերը նշուածից բացի այստեղ կան դիցաբանական կենդանիներ, ինչպիսիք են գրիֆոնը, սֆինքսը, թեւաւոր առիւծն ու շունը (կրկնում են մի քանի անգամ), կերպարներ, որ յայտնուում են ձեռագրերում մի փոքր ուշ: Թւում է, թէ Մողնու աւետարանի մանրանկարիչը ի մի է բերել բոլոր տեսակի արտասօվոր կենդանիների՝ որպէս հնամենի խորհրդանիշների, ու պատկերել նրանց պայմանական ձեւով: Ի հարկէ, Մլքէի աւետարանի նեղոսեան տեսարաններին եւս յատուկ է որոշակի պայմանականութիւն, բայց եւ այնպէս տեսարանի աւելի կենդանի պատկերումը, պլանների բաժանումը, ինչպէս նաեւ մարդկային ֆիգուրների ու կենդանական աշխարհի համեմատաբար իրապաշտական մեկնաբանումը՝ այս ամէնը թոյլ է տալիս զգալու նախատիպի անմիջական ազդեցութիւնը, ինչպէս նաեւ Մլքէի վարպետի ուշ անտիկ արուեստին ծանօթ լինելը: Տ. իզմայլովայի կարծիքով Անիի մանրանկարիչը կարող էր ներշնչուած լինել հէնց Մլքէի մանրանկարներից, ուր դեռ պահպանուած է «հելլենիստական աւանդոյքների մաքրութիւնը»¹⁶: Իսկապէս, նեղոսեան տեսարանները կարեւորագոյն պատկերագրական յօրինուածքներ են, որ կապում են Մլքէի աւետարանի գեղանկարչութիւնը հելլենիստական եւ ուշ անտիկ աւանդոյթների հետ: Այդուհանդերձ, ձեռագրում ջրային թեման դրանով չի սպառուում: Առաջին եւ երկրորդ համաբարբառի կանոնների լիւնետում (թթ. 2բ-3ա) այս անգամ արդէն պատկերուած է ծովային աշխարհ՝ դելֆիններ, ձկներ, ութոտնուկներ, կաղամարներ: Այս պատկերները, որ նոյնպէս սերում են անտիկ արուեստից, շատ հազուադէպ են:


Ինչպէս նշուեց, բոլոր խորանները ունեն հանդիսաւոր ձեւաւորում, աչքի են ընկնում ինչպէս գոյնով, այնպէս էլ գեղարուեստական առանձնայատկութեամբ: Տարբեր գոյներով են ներկուած սիւների խարիսխները, սակայն դա չի խանգարում յօրինուածքի կառուցողական ներդաշնակութեանը (արխիտեկտոնի-

¹⁵ Иzmайлова Т. А. Армянская миниатюра XI века. М., 1979. Ил. 85.

¹⁶ Նոյն տեղում, էջ 136:

կային): **Մեծ կամարները պսակուած են թռչուններով ու բազմազան բուսական տարրերով:** Այստեղ եւ՝ ծաղկեշղթաներ են (1-ին եւ 2-րդ խորանները), եւ՝ խոշոր ծաղկիներով ու նուան պտուղներով ծաղկեթմբեր, անկիւններում՝ արմաւաճիւղեր (3-րդ խորանը): Նման զարդաձեւեր կարելի է հանդիպել Ռաբուլայի աւետարանում 586 թ. (թթ. 10բ, 11ա), Փարիզի ազգային գրադարանի յունական X դ. cod. gr. 70 ձեռագրում (թթ. 7ա, 8ա), կջմիածնի 989 թ. աւետարանում (թթ. 1բ, 2ա, 5բ) եւ այլն: Իսկ թռչուններից ներկայացուած են բաղեր, սիրամարգեր եւ յատկապէս արտասովոր նրբագեղ քայլուածքով Փլամինգոներ:

Լրիւ այլ թեմատիկա է ներկայացուած երրորդ համաբարբառի կանոնում (թ. 3բ), որտեղ խորհրդաբանական կեանքի ծառի շուրջ պատկերուած են երկու կատուառիւծներ (յովազներ): Եթէ նախորդ թեմաները կապուած էին հելենիստական կամ ուշ անտիկ պատկերների հետ, ապա այս յօրինուածքը սերում է արեւելեան պատկերագրութիւնից: Կեանքի ծառի շուրջ թռչունների կամ կենդանիների պատկերումը ընդունուած էր յատկապէս Սասանեան արուեստում, որը նաեւ լայն կիրառում է ստանում բիւզանդական ու ընդհանուր առմամբ արեւելաքրիստոնէական աշխարհում (մետաքսեայ կտորներ, սպասք, դրուագում):¹⁷ Յունական նկարազարդ ձեռագրերում կենդանիների պատկերումը համատարած բնոյթ է կրում սկսած ԺԱ դ. վերջից եւ ԺԲ դ., բայց երբեմն նաեւ վաղ մատեաններում կարելի է հանդիպել նման պատկերներ: Այսպէս, Փարիզի ազգային գրադարանի յունական Աւետարանում cod. gr. 70 (թ. 8ա) շրջանի մէջ առնուած հաւասարաթեւ խաչի շուրջ պատկերուած են զոյգ առիւծներ (կատուառիւծներ), որ նոյնանում են Մլքէի օրինակի հետ եւ՝ յօրինուածքի, եւ՝ խորհրդաբանութեան առումով:¹⁸



Համարաբառի կանոն, թ. 2բ

Ցածորդ մանրանկարը ներկայացնում է միակ տէրունական պատկերը՝ Համբարձումը: Յօրինուածքը ամբողջ էջն է գրաղեցնում, եզրաւորուած է երկգոյն, պարզ շրջանակով: Պատկերագրութիւնը աւանդական է: Վերեւում հանդիսաւոր գահին է բազմել Քրիստոսը՝ որպէս երկնային եկեղեցու խորհրդանիշ: Նա պատկերուած է մեծ լուսապսակի (մանդորլայի) մէջ, որ բարձրացնում են հրեշտակները: Ներքեւում՝ կենտրոնում, Տիրամայրն իշխանութեան պատճենը պատկերված է առաջնական տէրունական պատկերում:

¹⁷ Դարկевич В.П. Светское искусство Византии. М., 1975, с. 187-200.

¹⁸ Պանкова М.М. Эмальерный стиль византийского орнамента греческих рукописей X-XIV вв. // ДРИ. Искусство рукописной книги. Византия. Древняя Русь. С-Пб., 2004, с.190.

¹⁹ Հնագոյն խորհրդանիշներից մէկը՝ կեանքի ծառը, որ վերափաստաւորւում է քրիստոնէական արուեստի համատեքստում, իմաստային առումով նոյնանում է Խաչի հետ, մասնաւունդ որ Հին կտակարանում որպէս Խաչի նախատիպ հանդէս է գալիս նոյն կեանքի ծառը՝ յաւերժական կեանքի խորհրդանիշը:

Է՛ երկրային եկեղեցու խորհրդանիշը Օրանտայի գիրքով եւ երկու կողմերից նրան են մօտենում առաքեալները:

Առաջին հայեացքից թւում է, որ Մլքէի Համբարձման տեսարանը նոյնանում է Ռաբուլայի աւետարանի համանուն յօրինուածքի հետ, սակայն կան էական տարբերութիւններ ինչպէս պատկերագրութեան, այնպէս էլ ոճի մէջ: Ռաբուլայում Համբարձումը տրուած է համաձայն արեւելեան պատկերագրութեան՝ մարգարէական տեսիլքներով, մինչդեռ Մլքում դրանք բացակայում են: Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ հայկական յուշարձաններում միշտ նախապատուութիւնը տրուել է արեւելեան պատկերագրութեանը՝ մարգարէական տեսիլքներով, ինչպէս դա կարելի է տեսնել Լմբատի եւ Կարմրաւորի որմանկարներում (է դ.)²⁰: Մրանից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ պատկերագրական առումով Մլքէի մանրանկարը յարում է Բիւզանդիայի արեւմտեան տարածքների՝ Ռաւեննայի ու Հռոմի կամ էլ խոշոր հելլենիստական կենտրոն հանդիսացող Ալեքսանդրիայի օրինակներին: Այդ են վկայում մանրանկարների մի շարք այլ առանձնայատկութիւններ:

Համբարձման տեսարանում հետաքրքրութիւն են ներկայացնում թոչող հրեշտակները, որոնց գրեթէ հորիզոնական, գեղեցիկ ճկուած մարմիններն ու գլխի թեքուածութիւնը յիշեցնում է վաղքրիստոնէական պատկերագրութիւնից լաւ յայտնի Խաչի փառաբանման տեսարան, որ առկայ է Բարբերինիի դիպտիխում (Դ. դ., Լուկը)²¹ եւ էջմիածնի փղոսկրեայ կազմին (Զ. դ., Մատենաղարան)²²: Այս իմաստով հետաքրքիր է այն փաստը, որ՝ համաձայն Վրթանէս Քերթողի (է. դ.), Հայաստան են բերուել ինչպէս փղոսկրեայ (դրանցից մէկն է էջմիածնինը), այնպէս էլ կարմիր կաշուէ կազմեր,²³ որը ապացոյց է ինչպէս Բիւզանդիայի հետ մշակութային աշխոյժ կապերի, այնպէս էլ Հայաստանում վաղքիւզանդական ձեռագրերի առկայութեան²⁴:

²⁰ Дурново Л.А. (1957), с.8, 9- 10; она же: Очерки изобразительного искусства средневековой Армении. М., 1979, с. 139-140.

²¹ Грабар А. Император в византийском искусстве (переизд.). М., 2000, таб. IV.

²² Матенадаран (составители и авторы текста В. Казарян, С Манукян). М., 1991, т. 1, ил.12-13.

²³ Նոյն տեղում. էջ 18:

²⁴ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻ ՍԵՎԱՆ Ա., VII դ. մի երկ նուիրուած պատկերների պաշտպանութեանը (Ճայ արուեստը միջնադարում), Երեւան, 1975, էջ 7-30, (նոյնը. Der-Nersessian S. Apologie des images du VII siècle // Etudes Byzantines et Arméniennes. Louvain, 197, vol.1).



Համբարձում, թ. 8ա

Նմանատիպ ուշ անտիկ եւ վաղքրիստոնէական օրինակներից են փոխառնուած Քրիստոսին ուղեկցող երկու հրեշտակապետները՝ երկրային պահապանները, որ յիշեցնում են կայսերական պահակազօրի զինուորներին: Զէ՞ որ Համբարձումը Քրիստոսի յաղթանակն է, իսկ վերջինիս պատկերագրութիւնը՝ վերա-

իմաստաւորուած ուշ անտիկ յաղթական թեմատիկան: Մինչեւ անգամ կարելի է ասել, որ հրեշտակապետները, ինչպէս նաեւ թուզող հրեշտակները մի-մի քաղուածքներ լինեն վերցուած վաղ-քրիստոնէական յուշարձանից, օրինակ, Արկադիոսի յաղթասեան քանդակներից (402 թ.)²⁵: Այդ են վկայում հրեշտակապետների հանդերձանքը: Նրանք ունեն ազատ թիկնոցներ, որ գեղեցիկ իշ-նում են կտորի ծանրութեան ներքոյ, ամրանում աջ ուսին (մի-անգամայն սիմետրիկ) ու զարդարուած են գունաւոր ներդիրնե-րով: Հէնց այդպիսի թիկնոցներ ենք հանդիպում մի շարք վաղ-քրիստոնէական օրինակներում. 395 թ. կոնսուլ Պրոբի դիպու-խում, Խալբերշտատի մայր տաճարի գանձատուփի վրայ²⁶, Ծո-սանոյի Զ. դ. երկրորդ կէսով թուագրուող ձեռագրում (Քրիստոս եւ Բարաբբա), Սան Վիտալէի խճանկարներում (Յուստինիանոսի շքախումբը):

Համբարձման տեսարանը ունի յստակ ու խիստ սիմետրիկ կառուցուածք՝ արտայայտուած եւ՝ առանձին ֆիզուրների ու մա-սերի բաշխման, եւ՝ գունային համադրութեան մէջ: Այստեղ ընդ-գծուած է դադարը, որ իւրայատուկ հանդիսաւորութիւն է հա-դորդում ողջ յօրինուածքին, ինչպէս նաեւ տրամադրում հան-դիստ ու ոիթմիկ ընկալմանը: Մանրանկարի ոիթմիկական կա-ռուցուածքը ձեւաւորում է յօրինուածքի առանձին մասերի հա-մադրութեամբ. գահին նստած Քրիստոսն ու երկու հրեշտակա-պետները աչքի են ընկնում ուղղահայեաց կեցուածքով եւ ստա-տիկութեամբ, մինչեւ ներքեւի մասում պատկերուած Տիրամայ-րը եւ առաքեալները ներկայացուած են շարժուն ու անհանգիստ դիրքով: Քրիստոսի պատկերը խիստ ուղղահայեաց է, հայեացքը՝ ինքնամփոփ, իսկ Տիրամայրը՝ շրջուած գեղեցիկ կոնտրապոստի դիրքում, ձեռքերը վեր պարզած եւ ուղղորդուած հայեացքով: Տիրամօր պատկերը թէ՛ յօրինուածքի, թէ՛ ոճական առումով նոյ-նանում է Ե. դ. զպտական մի ստելայի կնոջ պատկերի հետ (Մոսկուայի Պուշկինի անուան թանգարան)²⁷, որը նոյնպէս ներ-կայացուած է Օրանտայի դիրքով եւ ընդգծուած խոշոր դաս-տակներով ինչպէս Մլքէում:

Մլքէի մանրանկարների գունային պալիտրան աչքի չի ընկնում բազմերանգութեամբ, սակայն հնչեղ է ու արտայայտիչ:

²⁵ Գրաբար Ա. (2000), տաբ. XIII-XV.

²⁶ Նոյն տեղում. աղ. III (1,2):

²⁷ Искусство Византии в собрания СССР. М., 1977, ч. 1, ил. 277.

Օգտագործուած են հիմնականում մանուշակագոյն, կանաչ, կար-միր, կապոյտ եւ սպիտակ գունային համադրութիւնները՝ տեղ-տեղ ոսկու կիրառմամբ (լուսապսակները, հագուստի ներդիրնե-րը): Համբարձման մանրանկարի համարեա թէ չէզոք ֆոնի վրայ յատկապէս ընդգծում են գունային շեշտերը, որ ձեւաւորում են գունային յօրինուածքը: Շեշտերը արձագանքում են միմեանց՝ ստեղծելով իւրայատուկ երկրաչափական սխեմաներ, որոնք էլ աւելի են ընդգծում յօրինուածքի սիմետրիկութիւնը: Այսպէս, հրեշտակապետների մանուշակագոյն թիկնոցը, ինչպէս նաեւ Քրիստոսի ու Տիրամօր հանդերձանքը ձեւաւորում են եռանկիւ-նի, նոյնը տեսնում ենք կարմիր գոյնի օրինակով՝ ընդգծուած գահի վրայ դրուած բարձի, թուզող հրեշտակների թիկնոցի եւ առաքեալների հանդերձանքի միջոցով: Այս հեշտութեամբ ընկա-լուող գունային արձագանքները անտիկ գեղարուեստական սկըզ-բունքներ են, որ իրենց շարունակութիւնն են ունեցել վաղքրիս-տոնէական գեղանկարչութեան մէջ, իսկ վերջինիս միջոցով էլ՝ Մլքէի աւետարանի մանրանկարներում:

Մեր ձեռագրի մանրանկարներին յատուկ է յստակութիւն եւ գեղարուեստական միջոցների պարզութիւն: Այստեղ կայ թե-թեւ, տեղ-տեղ թափանցիկ ներկի շերտ, նկարչական սահուն եղանակ, գծանկարը թոյլ է, երբեմն բոլորովին չարտայացուած, չկայ լուսաստուերային մողելաւորում, պատկերները ունեն հա-մաչափ գունային բաշխում՝ երբեմն տոնային մողելաւորման կի-րառմամբ: Մլքէի մանրանկարին յատուկ են համարձակ վրձնա-հարուածներ, որ ծածկում են մեծ հարթութիւններ, այդ իսկ պատճառով գեղարուեստական մեկնաբանումը ունի ընդհանրա-կան բնոյթ, հագուստի ծալքերը լայն են եւ ազատ, չունեն բարդ կորութիւններ, բայց միեւնոյն ժամանակ չեն կորցնում իրենց պլաստիկութիւնը եւ ճկունութիւնը:

Մլքէի մանրանկարներում կերպարի մեկնաբանումը զգալի տարբերուում է աւանդական հայկական օրինակներից: Մարմիննե-րը համեմատաբար խոչոր են՝ համաչափ տարածութեանը: Նրանք ունեն անատոմիական ճիշտ կառուցուածք, սակայն կարծես մի փոքր կարճեցուած: Կեցուածքները ազատ են ու անկաշկանդ, ֆիզուրները թեթեւ են՝ կարծես անմարմին (առաքեալների գլուխները համեմատաբար խոչոր են, իսկ ոտքերի ծայրերը շատ փոքր, որ հազիւ են դիպչում գետնին): Դէմքերը ունեն թոյլ գծանկարային մողելաւորում՝ արուած բաց հիմքի վրայ, իսկ աշ-տերը՝ թեթեւ արտայայտուած: Կարծես խուսափելով միօրինա-

կութիւնից, վարպետը առաքեալների դէմքերը յաջորդաբար ներկում է բաց եւ մուգ, միեւնոյն ժամանակ ձեւաւորելով որոշակի ոիթմիկական ընթացք:

Ընդհանուր առմամբ Մլքէի կերպարները արտայայտիչ են: Քրիստոսի կերպարի մէջ արտայայտուած է սեմիտական տիպը, որը չկայ միւս պատկերներում: Առաքեալները շատ երիտասարդ են (միայն մի քանիսն են միջին տարիքի), ունեն փարթամ մազեր եւ, համաձայն հոռմէական աւանդոյթի, կարճ մօրուք: Նըրանք աչքի չեն ընկնում տիպերի բազմազանութեամբ, ինչպէս նաեւ ներքին յագեցուածութեամբ, աւելի անմիջական են ու պարզ՝ նման փաղքրիստոնէական կերպարներին: Համբարձման տեսարանի առաքեալների պատկերները շատ մօտ են եւ՝ փաղքրիստոնէական քանդակում (սարկոֆագներ), եւ՝ նկարազարդ ձեռագրերում հանդիպող կերպարներին (Ռուսանոյի ձեռագիրը):

Համբարձման մանրանկարում, ինչպէս նաեւ Մլքէի աւետարանի միւս յօրինուածքներում կան հետաքրքիր մանրամասներ, որ թոյլ են տալիս աւելի յստակ պատկերացնելու այս ձեռագրի հնարաւոր նախատիպը: Խօսքը վերաբերում է իւրայատուկ կրնկաւոր, նեղ կօշիկներին, որ կրում են առաքեալները, հրեշտակները, ինչպէս նաեւ չորս աւետարանիչները, մինչդեռ համաձայն պատկերագրութեան պէտք է կրէին սանդալներ: Հետաքրքիր է, որ այս տիպի կօշիկներ հանդիպում ենք փաղքրիստոնէական յուշարձաններում, օրինակ, Ռաւեննայի Սան Ապոլինարէ ին կլասսի ու Սան Վիտալէի, Միլանի Սան Վիտորէ ին Ջել դ'Օրոյի (Ե. դ. երկրորդ կէս):²⁸ Եւ Հոռմի Սան Անյեզէի խճանկարներում, ինչպէս նաեւ Սինայի սր. Կատարինէի վանքի յայտնի սրբապատկերում (Տիրամայրը սրբ. Գէորգի ու Թէոդորոսի հետ):²⁹ Ու զպտական Բառիտի վանքի որմնանկարներում³⁰:

Մի փոքր առաջ ընկնելով նշենք եւս մի կարեւոր մանրամասն: Բանն այն է, որ Մատթէոս եւ Մարկոս աւետարանիչները պատկերուած են կուլակով (տոնզուրա), որ բացառիկ է հայկական պատկերագրութեան համար: Այսպիսիները յայտնի են ինչ-

պէս փաղքրիստոնէական, այնպէս էլ բիւզանդական ու արեւմըտեան թ. դ. յուշարձաններում: Օրինակ, Սան Ապոլինարէ նուովո (նահատակների շարքը), Սան Վիտալէ (Հոգեւորականը Յուստինիանոսի շքախմբից), Հոռմի Սան Անյեզէ (Միմահ եւ Հոնորիոս պապերը), Փարիզի գրադարանի Վիվիենի աստուածաշունչը 845-846 թթ. (Հոգեւորականները ձեռագիր են յանձնում Կարլոս Ճաղատին), ինչպէս նաեւ Գրիգոր Նազիանզացու Միլանի ձեռագրի մի քանի մանրանկարներ (cod. E49-50 inf, Ամբրոզիանայի գրադարան):³¹ Կուլակի կիրառումը կապուած է հոռմէական, կամ փաղքրիստոնէական եկեղեցական աւանդոյթի հետ, որը հետագայում փոխառուում է կաթոլիկների կողմից:

Մլքէի աւետարանում պահպանուել են աւետարանիչների բոլոր չորս դիմանկարները՝ ներկայացուած երկու պատկերագրական տարրերակներով. Մատթէոսն ու Մարկոսը որպէս փիլիսոփաներ, որ նստած խորհում են իրենց գրուածքները, Ղուկասն ու Յովհաննէսը՝ որպէս հոետորներ: Աւետարանիչները ներկայացուած են զոյերով՝ թերթերի հանդիպակաց էջերին. թթ. 4թ – 5ա՝ Մատթէոս եւ Մարկոս, թթ. 5թ – 6ա՝ Ղուկաս եւ Յովհաննէս: Տարբեր պատկերագրական տիպերի համակցումը յատուկ է վաղ ձեռագրերին, օրինակ, Ռաբուլայի աւետարանին, ինչպէս նաեւ ժամանակային առումով աւելի մօտ հանդիսացող վրացական Աղիշիի 897 թ. աւետարանին (Մեստիա, Սվանետի):³²

Մեր ձեռագրում աւետարանիչների պատկերները նմանցուած են համաձայն զոյերի: Այսպէս, Մատթէոսի ու Մարկոսի դիմանկարները բաղկացած են ծիածանաձեւ շրջանակների շըդթայից, որ կարծես փայլատակում են: Այս անտիկ զարդաձեւը լայն կիրառում ունէր վաղ ձեռագրերում՝ Փարիզի Միրիական Աստուածաշնչում սց. 341³³, ինչպէս նաեւ երկու հայկական Աւետարաններում՝ Էջմիածնի (Եւսեբիոսի նամակը, թ. 1թ) եւ №697

²⁸ Зинграйкина С.П., Мозаики капеллы Сант Витторе ин Чьел д'Оро в Милане. Особенности иконографической программы // Образ Византии. Сборник статей в честь О.С. Поповой. М., 2008, ил. 4-5.

²⁹ Лазарев В. Н. (1986), т.2, ил. 40, 54, 57, 61, 63, 73.

³⁰ Friend A. M. (1927), pl.V (65-66).

³¹ Գրիգոր Նազիանզացու Միլանի ձեռագիրը հնարաւոր է, որ արտագրուել է Հոռմի արեւելեան ծագում ունեցող վանքերից մէկում: Տե՛ս Օրեցկая И.А., Греческие иллюстрированные рукописи IX века: Книга Иова (Vat.gr.749), Гомилии Григория Назианзина (Bibl. Ambrosiana, cod. E49-50 inf) и Sacra Parallelia (Paris, BN, gr.923). Автореферат кандидатской диссертации. М., 2002, с.24.

³² Амиранашвили Ш.Я., Грузинская миниатюра. М., 1966, с. 13-14, ил. 1-2.

³³ Frantz A. M., Byzantine Illuminated Ornament // The Art Bulletin. Vol. №1. March, 1934. Pl. XXV (13).

Վիեննայի Միհիթարեան հաւաքածուից, Ժ. դ. (կանոններ թթ. 2թ, 3ա)³⁴ եւ այլն:

Դիմանկարների յաջորդ զոյգը զարդարուած է հարուստ ծաղկեշթայից կազմուած չըջանակներով, որի պատկերագրական ակունքները նոյնպէս սերում են վաղ ձեռագրերից (Աւետարան Vat. lat. 3806 VI դ.³⁵, Ռաբուլայի աւետարանը, Վիեննայի Դիոսկորիդը med. gr. 1 VI դ., Patmos cod.33 941թ., Coislin 195 Փարիզ Ժ. սկիզբ, Տրապիզոնի յունական աւետարանը թր. 21 Սանկտ-Պետերբուրգի ազգային գրադարանից Ժ. դ. երրորդ քառորդ³⁶). Զարդաշդթայի տեսակը, որ եզրաւորում է Յովհաննէսի դիմանկարը, օգտագործուած է նաեւ Մլքէի երեք խորանների յարդարանքում (թթ. 1թ, 2ա, 3թ), իսկ Հուկասի օրինակը հաւանաբար իր կրկնութիւնն է ունեցել չպահպանուած խորաններում, միեւնոյն ժամանակ մօտ զուգահեռներ ունի յունական Փարիզի Coislin 195 ձեռագրում (Մատթէոսի դիմանկարը, թ. 9թ)³⁷: Մլքէի բոլոր չորս դիմանկարների չըջանակները ունեն ընդհանուր մի առանձնայատկութիւն. անկիւնային հատուածները գալարակի ձեւ ունեն: Նոյն այս հնարքը, որ դիմանկարներին հանդիսաւորութիւն ու չքեղութիւն է հաղորդում, կայ նաեւ ձեռագրի երկու խորաններում (թթ. 2թ, 3ա), ինչպէս նաեւ հանդիպում է մի շարք յունական եւ արեւմտեան կողեքսներում: Այդ շարքից նշենք Փարիզի աստուածաչունչը cod. gr. 139 (թ.3թ) եւ յայտնի Տրապիզոնի յունական աւետարանը թր. 21 (Մատթէոսի ու Մարկոսի պատկերները, թթ. 5թ, 13թ; Ունլուայ, թ. 6թ; Հարսանիքը կանայում, թ. 2ա; Խւզաքեր կանայք Տիրոջ գերեզմանի մօտ, թ. 7ա)³⁸, իսկ կարոլինքնեան օրինակներից՝ Փարիզի Գոդեսկալկի

³⁴ Buschhausen H. und H. Armenische Handschriften der Mechitaristen-Congregation in Wien. Wien, 1981. Taf. IV-V.

³⁵ Нессельштраус Ц.Г. Искусство раннего Средневековья. Новая история искусств. С-Пб., 2000. Ил. 46.

³⁶ Frantz A. M. (1934). Pl. XV (2), XIX (17- 18), XX (17, 22, 23), XXV (2).

³⁷ Weitzmann K. The Study of Byzantine Book Illumination. Past, Present and Future // The Place of Book Illumination in Byzantine Art. Princeton, 1971. Fig. 36.

³⁸ Лихачева В.Д. Византийская миниатюра. Памятники византийской миниатюры IX-XV веков в собраниях Советского Союза. М., 1977. Таб. 5, 7; Weitzmann K. Die Byzantinische Buchmalerei des 9 und 10 Jahrhunderts. Berlin, 1935 (reprint: mit Addenda und Appendix). Wien, 1996. Abb. 392-398.

աւետարանը MS lat. 1203, 781-782 թթ. (Կեանքի աղբիւրի պատկերով եւ Մատթէոսի աւետարանի մուտքը)³⁹:

Աւետարանիների առաջին զոյգը՝ Մատթէոսի ու Մարկոսի, պատկերուած են նստած բազկաթոռներին եւ յօրինուածքային առումով ուղղուած միմեանց: Նրանց առջեւ միայն գրակալներն են, իսկ աւանդական աշխատանքային սեղանիկները բացակայում են: Նման առանձնայատկութիւն կարելի է տեսնել վաղ ձեռագրերի այնպիսի օրինակներում ինչպիսիք են. Ռաբուլայի աւետարանը (Մատթէոս եւ Յովհաննէս), Ռոսանոն (Մարկոս), եւ որպէս աւանդոյթի շարունակութիւն, համարեա բոլոր Կարոլինքնեան կողեքսները՝ Գոդեսկալկի ձեռագրը MS nouv. acq. Lat 1203 (Մարկոս թ. 1թ), Ֆրանցիսկ II աւետարանը MS lat. 257 թ. դ. երկրորդ կէս, երկուսն էլ Փարիզի ազգային գրադարանից (Յովհաննէս թ. 147թ)⁴⁰, Միւնիսէնի ազգային գրադարանի cod. Aureus lat. 14000 ձեռագրիրը 870 թ. (Մարկոս)⁴¹ եւ այլն:

Խորանների սիւների նման գրակալները մարմարի հարուստ ֆակտուրա ունեն, մոնումենտալ են, արուած կենդանիների՝ առիւծի ու արծուի տեսքով: Ամենայն հաւանականութեամբ դըրանք աւետարանիների խորհրդանիշներն են: Եթէ առաջնորդուելու լինենք առաւել ընդունուած կարգի՝ համաձայն Եպիփանիի, ապա դրանք չեն համապատասխանում աւետարանիներին, որովհետեւ առիւծը Մատթէոսի մօտ է, իսկ արծիւը՝ Մարկոսի: Այս «չփոթմունքին» ուշադրութիւն են դարձրել նաեւ միւս ուսումնասիրողները, ենթագրելով, որ, կամ դիմանկարների հերթականութիւնն է խախտուել⁴², կամ էլ գրակալները պարզապէս խորհրդանիշներ չեն⁴³: Կարելի է ենթագրել, որ Մլքէի աւետարանի դիմանկարներում իրենց արտայատութիւնն են գտել խորհրդանիների տարբեր մեկնաբանումներ, որ կիրառում ունէին վաղքրիստոնէական ժամանակաշրջանում եւ համաձայն որոնց առիւծը Մատթէոսն է ըստ իպոլիտ Հովոմէացու, իսկ արծիւը՝

³⁹ Нессельштраус Ц. Г. (2000). Ил.133..

⁴⁰ Смирнова Э. С. Миниатюры Остромирова Евангелия. Особенности иконографии // Образ Византии. Сборник статей в честь О. С. Поповой. М., 2008. Ил. 4, 6.

⁴¹ Friend A. M. (1927). Pl. XII (113).

⁴² ՍԱՐԳԻՍԵԱՆ Բ., (1914), էջ 378-379:

⁴³ ՃԱՆԱԾԵԱՆ Մ., (1970), էջ 80-81:

Մարկոսը ըստ իրինէի⁴⁴: Սակայն առաւել հաւանական է, որ հայ վարպետը պարզապէս հետեւել է նախատիպին եւ կրկնել արդէն գոյութիւն ունեցող սկզբունքը⁴⁵: Չնայած այն բանին, որ մեզ չաջողուեց գտնել նման օրինակներ յունական ձեռագրերում, սակայն նշենք, որ գրակալներ սիրում էին պատկերել եւ Մակեդոնեան ժամանակաշրջանում՝ յաճախակի ձկան տեսքով. Աթոսի Ստալրոնիկիտայի աւետարանը cod. 43, (թ. 13թ, Յովհաննէս), Փարիզի աւետարանը cod. Coislin 195 (թ. 349թ, Յովհաննէս) ու Վատիկանի աւետարանը cod. gr. 220 Vat. Palat. (թ. 184ա, Յովհաննէս) ձեռագրերը:

Մլքէի աւետարանիչների դիմանկարը նոյնանում են յօրինուածքով: Առաջին պլանում աւետարանիչներն են, նրանց հետեւում ծաւալում է բազմապլան պայմանական տարածութիւնը, որ արտայայտուած է յատակի, վարագոյրի, ճարտարապետական կուլիսների ու երկնքի միջոցով: Չնայած, որ պլանային բաժանումը յստակ է, մանրանկարում տարածութիւնը զուրկ է խորութիւնից եւ ծաւալից, կարծես ամէնը բերուած է մի հարթութեան՝ առաջին պլանի: Նման մեկնաբանման մէջ կարելի է գուշակել դեկորատիւ եւ պայմանական մտածելակերպի հակուած հայ վարպետի ձեռքը:

Դիմանակարների հարթային ընկալմանը նպաստում է փոքր ինչ բարձր հորիզոնը⁴⁶, որ անցնում է վարագոյրների ետեւից եւ ընդգծուած է առանձին առարկաների կտրուկ ռակուրսով: Այսպէս, Մարկոսի բազկաթոռը շրջուած է տարածութեան մէջ, տրուած կտրուկ հեռանկարով, եւ արդիւնքում ֆիգուրը կարծես առաջ է սահում: Ի տարբերութիւն Մարկոսի Մատթէոսը բազմել է բարձր աթոռին հաստատուն դիրքով, մինչդեռ ոտքերի յենարանը տրուած է կտրուկ հեռանկարով, տարածուելով առաջին պլանին զուգահեռ եւ հակասելով խորութեան պատրանքին:

⁴⁴ Galavaris G. The Illustrations of the Prefaces in Byzantine Gospels. Wien, 1979. P.17-23, 36-49; Nelson R. The Iconography of Preface and Miniature in the Byzantine Gospel Book. NY, 1980. P. 9-38.

⁴⁵ Այս իմաստով հետաքրքիր է, որ Ռաբուլայի աւետարանում աւետարանիչների ըստ գոյգերի բաշխումը ոչ աւանդական է. Մատթէոսը պատկերուած է Յովհաննէսի հետ (թ. 9թ), իսկ Մարկոսը՝ Ղուկասի (թ.10ա). Տե՛ս Leroy J. Les manuscrits Syriaques à Peintures Conservés dans les Bibliothèques d'Europe et d'Orient. Paris, 1964. Pl. 28 (1-2).

⁴⁶ Նման միտում կայ Աղիշիի աւետարանի Ղուկասի եւ Յովհաննէսի համատեղ դիմանկարում: Տե՛ս 32-րդ ծանօթագրութիւնը:



Մատթէոս աւետարանից, թ. 8թ

Վերը նշուած յօրինուածքային առանձնայատկութիւնները իրենց զուգահեռներն են գտնում կարոլինգեան այնպիսի ձեռագրում, ինչպիսին են. Սեն Մեդարդի աւետարանը Սուլասոնից lat. 8850, Փարիզի գրադարան, մօտ 800 թ. (Յովհաննէս, թ. 180թ)⁴⁷ եւ Գարլիի ձեռագիրը (MS 2788, 790-800 թթ.) Բրիտանական թանգարանից (Մատթէոս)⁴⁸, որտեղ տարածութիւնը նոյն-

⁴⁷ Nordenfalk C. L'enluminure au Moyen Age. Genève, 1988. P.56.

⁴⁸ Dodwell C.R. Painting in Europe 800 to 1200. Baltimore, 1971. Pl. 19.

պէս զուրկ է խորութեան պատրանքից, չնայած որ ընդգծուած են պլանները, առկայ են հարուստ ճարտարապետական կուլիսները՝ երբեմն նաեւ տրուած հեռանկարով։ Այստեղ, ինչպէս եւ Մլքէի աւետարանում, ոտքերի յենարանները ունեն նոյն կտրուկ ռակուրսը, որը զգալի է դարձնում դեկորատիվ սկզբունքը։

Խողոյ առարկայ աւետարանի Ղուկասի եւ Յովհաննէսի դիմանկարներում կայ ֆոնի մի հատուած, որի մեկնաբանումը յստակ չէ (Ղուկասի մօտ դա յատակի մասն է, իսկ Յովհաննէսի մօտ՝ վերեւի)։ Արտասովոր, կցուած սիւների շարք յիշեցնող այս հատուածները կ. Վայցմանը անուանել է «երգեհոնային փողեր»⁴⁹։ Առաջին հայեացքից տարօրինակ այս դրուագները իրականում ճարտարապետական կուլիսներ են, որ այդքան իւրովի են մեկնաբանուել հայ վարպետի կողմից։ Այս պատկերը փաստորէն վերարտադրում է անկիւնային ելուստներով ճարտարապետական այն դրուագները, որ լաւ յայտնի են Մակեդոննեան ձեռագրերում։ Ստաւրոնիկիտայի աւետարանում սօն. 43 (Ղուկաս, թ. 12բ.), Պատմոսի սօն. 72 ձեռագրում (Ղուկաս, թ. 147բ.) եւ Philotheaeu սօն. 33 (Մարկոս) բոլորն էլ Աթոսից⁵⁰։ Մլքէի մանրանկարները առաւել մօտ են Փիլոտէուի օրինակին, քանի որ այստեղ ճարտարապետական տարրերը ունեն աւելի պայմանական մեկնաբանում, քան Ստաւրոնիկիտայի օրինակում։ Նման ճարտարապետական յօրինուածքներ կան եւ վաղ բիւզանդական մոնումենտալ գեղանկարչութեան մէջ՝ Սան Ապոլինարէ ին Կլասսէի ու Սան Վիտալէի խճանկարներում, ուր մեծ կամարների վրայ պատկերուած է խորհրդաբանական երկնային երուսաղէմը բազմապրոֆիլ ճարտարապետական կառոյցի ձեւով։

Մլքէի դիմանկարների տարածութեան ձեւաւորման կարեւոր տարրերից են վառ գոյնի վարագոյրները, որ ձգուում են ողջ ֆոնի լայնութեամբ։ Լայն ծալքեր ձեւաւորող գործուածքը տըրուած է մուգ եւ բաց գոյների համադրութեամբ, որ ստեղծում է նոր բացուած, դեռ չուղղուած եզրերով վարագոյրի պատրանք։ Թերեւս հէնց այս մանրամասն է, որ փոքր ինչ աշխուժութիւն է հաղորդում դիմանկարների յօրինուածքին։ Վարագոյրի կամ վելումի պատկերումը լայն կիրառում ունէր վաղքրիստոնէական

⁴⁹ Weitzmann K. (1933). S.7.

⁵⁰ Weitzmann K. Die Byzantinische Buchmalerei des 9 und 10 Jahrhunderts. Berlin, 1935 (reprint: mit Addenda und Appendix). Wien, 1996. Fig. 171, 293, 302.

յուշարձաններում ու Մակեդոննեան մանրանկարներում, որտեղ վերջինս՝ համաձայն անտիկ աւանդոյթի, մեծ դեր էր իսպառում պայմանական տարածութեան ձեւաւորման հարցում։ Նման դեկորատիվ յօրինուածքներ սիրում էին եւ կարոլինգեան ժամանակաշրջանում, սակայն ի տարրերութիւն Մակեդոննեանի, դրանք ունէին զուտ դեկորատիվ ու խորհրդաբանական իմաստ։ Այս առումով Մլքէի աւետարանի մանրանկարները մօտ են կարոլինգեան կողեկսներին։

Մլքէի մէկ այլ դեկորատիվ հնարքներից է յատակի ձեւաւորումը։ Երեք դիմանկարներում Մատթէոս, Մարկոս, Յովհաննէս, առկայ է մարմարեայ սալայատակ, որը իր ձեւերով կրկնում է սիւների յարդարանքը։ Յովհաննէսի մօտ այն նոյնանում է Եւսեբիոսի խորանի սիւների հետ, Մատթէոսինը՝ նման է երկրորդ խորանին, իսկ Մարկոսինը, հաւանաբար, նմանուած է չպահպանուած խորանների սիւներին։ Այս հնարքը նոյնպէս զուգահեռներ է գտնում Մակեդոննեան ձեռագրերում, օրինակ, սօն. 210 Աթէնքի ազգային գրադարանից (թթ. 93բ և 94ա)⁵¹։

Մլքէի ձեռագրի աւետարանիչները տարրերուում են կերպարի առումով եւ օժտուած են անհատական գծերով։ Մատթէոսը, Մարկոսը եւ Ղուկասը միջին տարիքի են, իսկ Յովհաննը՝ լայն, ընդգծուած այտոսկրերով։ Աւետարանիչների պատկերները յիշեցնում են անտիկ դիմանկարներ⁵² ու չնայած սրբութիւնն ընդգծող ոսկեգոյն լուսապսակների, այս կերպարները դեռեւս օժտուած չեն այն ասկետիզմով ու վերացկանութեամբ, որ յատուկ է քրիստոնէական պատկերներին։ Նրանք որոշակի են, կարծես պատկերում են անտիկ հռետորների ու փիլիսոփաների։ Յատկապէս Մատթէոսը, որ ոտքը ոտքին գըցած որպէս մի մտաւորական, բայց աւելի ճիշտ անրջող մի մարդ, խորասուզուած իր մտքերի աշխարհը, սակայն դեռեւս հեռու աստուածային բարձունքներից։

Մատթէոսի դէմքը շատ աշխոյժ է, կարծես ծեփուած է բազմագոյն խոշոր վրձնահարուածներից, որ արուած են բաց, գրեթէ թափանցիկ հիմքի վրայ։ Հիմնական կառուցողական շեշ-

⁵¹ Weitzmann K. (1935). Fig. 399-400.

⁵² Կազարյան Վ. Черты эллинистических традиций в армянской миниатюре // Античность и античные традиции в культуре и искусстве народов Советского Востока. М., 1978. С.166.

տերը տրուում են լայն լուսաբծերի միջոցով՝ արուած ճակատին, քթին, այտերին ու բերանի մօտ, որ համակցուելով օխրայի հետ ձեւաւորում են շատ հարուստ գունային ֆակտուրա: Առանձնակի արտայայտչականութիւն են հաղորդում խոշոր, նշաճեւ աչքերը ու լայն, ընդգծուած ունքերը (մի ունքը կոր, միւսը՝ բազմանիստ ուրուագծի ձեւով): Իսկ քթից վերեւ արուած երկու ուղղահայեաց խոր կնճիռները ընդգծում են մտաւոր հոգեվիճակը: Մատթէոսի կերպարը, թերեւս, ամենայաջողուածն է: Այն կարելի է համեմատել Ռոսանոյի եւ Ասորական աստուածաշնչի, ինչպէս նաեւ Ռաւեննայի կերպարների հետ:

Աւետարանիչները ունեն բաց գոյնի զգեստներ, իսկ թիկնոցները՝ կապոյտից մինչեւ բաց մանուշակագոյն: Հագուստը թափւում է լայն ծալքերով, տեղ-տեղ ընդգծուած է գծանկարը, երբեմն էլ լիովին բացակայում է՝ տեղ տալով վրձնահարուածներին ու գունային մողելաւորմանը: Իւրայատուկ է մեկնարանուած Մատթէոսի հանդերձանքը, որտեղ զգեստը ձեւաւորուած է թեթեւ, կարծես երերուն ծալքերով եզրաւորուած շատ բարակ գծերով (յատկապէս միջքի վրայ), որը յիշեցնում է կարոլինգեան մանրանկարներում հանդիպող հագուստի էքսպրեսիւ մողելաւորումը (էքոյի աւետարանը 816-820 թթ., էպերնի քաղաքային գրդարան):

Դիմանկարների վերը նշուած յօրինուածքային եւ դեկորատիւ առանձնայատկութիւնները հաստատում են, որ հայ մանրանկարիչը աշխատել է վաղ նախատիպով: Ակնյայտ է նաեւ, որ հայ վարպետը ձգտել է հնարաւորինս մօտ լինել նախօրինակին, սակայն, ինչը օրինաչափ է, նա ամէնը հաղորդել է համաձայն իր գեղարուեստական պատկերացումների:

Եթէ Մլքէի աւետարանի նախատիպի խնդիրը քիչ թէ շատ յստակ է, ապա տեղայնացման հարցը, կարծում ենք, դեռեւս անորոշ է եւ կարիք ունի լիացուցիչ քննարկման: Ինչպէս արդէն նշուեց, Գագիկ Արծրունու (թ. 222թ) եւ Մլքէի (թ. 147 եւ այլն) յիշատակարաններում նշուած է վասպուրականի վարագայ վանքը, որին ընծայուել է ձեռագիրը: Մասնաւորապէս, Գագիկի յիշատակումներում խօսուում է հէնց նուիրաբերման, այլ ոչ թէ ստեղծման մասին: Ինչպէս բազմիցս նշել են ուսումնասիրողները, նախնական յիշատակարանի տեքստը խմբագրուել է առն-

ուազն երեք անգամ ու տողերը ջնջուել⁵³: Բացի այդ, Գագիկը իրեն յիշատակում է որպէս թագակիր, որից ելնելով հարկ է թուագրել ոչ վաղ, քան 908թ: Գագիկի գահ բարձրանալու տարեթիւր: Այսպիսով, Գագիկ Արծրունին եւ իր տիկինը առաջին ստացողները չեն եղել⁵⁴:

Այսու հնարաւոր է ենթադրել, որ ձեռագիրը արտագրուել եւ նկարագրադուել է ոչ Վասպուրականում, քանի որ Վասպուրականի թագաւորութեան գլխաւոր յուշարձանը՝ Աղթամարի սր. Խաչ եկեղեցու որմնանկարները (915-921թթ.), որ ստեղծուել են Մլքէի աւետարանից մի փոքր ուշ, ի յայտ են բերում լիովին այլ (արեւելեան) գեղարուեստական ուղղուածութիւն՝ յատուկ պատմական Հայաստանի այս շրջանին: Զեռագրի ամբողջական կերպարը ու յատկապէս վերջինիս մանրանկարները հաստատում են այլ մշակութային մթնոլորտի մասին, քան դա կար Վասպուրականում: Սրանից ելնելով հնարաւոր է ենթադրել, որ Մլքէի աւետարանը ստեղծուել է Հայաստանի բիւզանդական հատուածում եւ միայն յետոյ տեղափոխուել վասպուրական: Այն, որ ձեռագիրը հաստատապէս նկարագրադուել է Հայաստանում՝ համոզում է ներկերի քիմիական ուսումնասիրութիւնը:

Հայկական նկարագարդ ձեռագրերի, այդ թւում Վենետիկի չորս մատեանների, մանրագննին ուսումնասիրութիւնը Թ. Մեթիւզի ու նրա գործընկերների կողմից⁵⁵ ցոյց տուեց, որ հայկական մանրանկարներում աւանդաբար օգտագործուել են օրդանական ծագում ունեցող ներկեր, եւ միայն առանձին դէպքերում, երբ ձեռագիրը ինչ-ինչ հանգամանքներով կապուած էր բիւզան-

⁵³ Փաստօրէն, յիշատակարանի նախնական նշումների մեծ մասը, որ կարող էր շատ կարեւոր տեղեկութիւններ յայտնել մեզ, ջնջուել է այդ միջամտումների արդիւնքում: Սակայն այսօր, նոր տեխնոլոգիաները հնարաւորութիւն են տալիս վերականգնել մագաղաթի վրայից ջնջուած տեքստը, որը յոյսով ենք մի օր կը ձեռնարկուի:

⁵⁴ Նման կարծիք յայտնել էին Բ. Սարգիսեանը, Մ. Ճանաշեանը, Ն. Ակոնցը:

⁵⁵ Cabelli D., Orna M., Mathews Th. Analysis of Medieval Pigments from Cilician Armenia // Archaeological Chemistry III, Advances in Chemistry Series 205, Washington, D.C., 1984; Cabelli D., Mathews Th. Pigments in Armenian Manuscripts of the 10th and 11th Centuries // Revue des Etudes Arméniennes. 1984. T. 18; Orna M., Mathews Th. Pigment Analysis of the Gladgor Gospel Book of U.C.L.A. // Studies in Conservation, 26. 1981; Mathews Th., Orna M. Four manuscripts at San Lazzaro, Venice // Revue des Etudes Arméniennes. 1992. T. 23.

դական գեղարուեստական աւանդոյթների հետ (օրինակ, Աղրիանապոլսի եւ Տրավիզոնի աւետարանները, մի խումբ ձեռագրեր Մելիտինէից), համապատասխանաբար կիրառում էին նաեւ հանքային ծագում ունեցող ներկանիւթեր: Մլքէի աւետարանի ուսումնասիրութեան արդիւնքները հետեւեալն են. մանրանկարներում գերակշռում են օրգանական ծագում ունեցող ներկերը եւ միայն երկու գոյն է, որ ստացուած են հանքային եղանակով, որը պացուցում է ձեռագրի տեղական ծագումը⁵⁶:

Միեւնոյն ժամանակ նշենք, որ Մլքէի աւետարանի Վասպուրականում յայտնուելը պատահական չէր եւ պայմանաւորուած էր այն քաղաքական ու մշակութային մթնոլորտով, որ ստեղծուել էր Թ. դարի վերջում, երբ Արծրունեաց իշխանական տունը գտնում էր իր ծաղկման շրջանում ու յաւակնում էր դառնալու այն առաջատար ուժը, որի շուրջ պէտք է միաւորուէր երկիրը: Իշխանական տան դիրքի մասին էր վկայում վեհաշուրք սբ. Խաչ եկեղեցին, որի որմնաքանդակները եւ որմնանկարները ստեղծուած են արեւելեան (տեղական) գեղարուեստական ոգով, եւ միեւնոյն ժամանակ այստեղ շատ բաներ վկայում են այն մեծ հետաքրքրութեան մասին, որ տածում էին Արծրունիները հանդէպ բիւզանդական արուեստն ու պատկերագրութիւնը: Այսպէս, Գագիկ Արծրունու կողմից եկեղեցու մանրակերտի ընծայումը Քրիստոսին որմնաքանդակը սերում է բիւզանդական դոնատորական յօրինուածքներից⁵⁷: Բիւզանդական պատկերագրական ուղղուածութիւն ունեն նաեւ որմնանկարների առանձին տեսարաններ, մասնաւորապէս, արեւելեան աւագ խորանում պատկերուած Բարեխօսութեան (Դեհիսուս) տեսարանը, որ նորութիւն էր հայկական արուեստում, իսկ հիւսիսային խորանի աւետարանական շարքը աւարտում էր Տիրամօր ննջի տեսարանով (չի պահպանուել):⁵⁸ Նշուած օրինակները կրկին անգամ հաստատում են այն միտքը, որ կար որոշակի հետաքրքրութիւն հանդէպ բիւզանդական արուեստը՝ պայմանաւորուած վերջինիս

⁵⁶ Mathews Th., Orna M. Four manuscripts at San Lazzaro, Venice // Revue des Etudes Arméniennes. 1992. T. 23. P. 537-538.

⁵⁷ Ակոպյան Յ. Ա. Պորտրետ զակաչիկա Ադրիանոպոլսկու Եվանգелиա (Կ վօրուստու ու պահպանութեան համար) // Իստորիկո-ֆիլոլոգիկ աշխատանքներ. Երևան, 2005. №2 (169). C. 242-243.

⁵⁸ Տե՛ր-ՆերՍէՍԵԱՆ Ս., Աղքամար // Տե՛ր-ՆերՍէՍԵԱՆ Ս., Հայ արուեստը միջնադարում, Յօդուածների ժողովածու: Երեւան, 1975, էջ 107:

առաջատար դիրքով: Միայն նման հետաքրքրութեան արդիւնքում գեղարուեստական այս որակի ձեռագիրը կարող էր հետաքրքրել Արծրունեաց տան ներկայացուցիչներին⁵⁹:

Եւ այսպէս, ինչպէս փորձեցինք ցոյց տալ Մլքէ թագուհու աւետարանում շատ են անտիկ եւ վաղքրիստոնէական պատկերագրական ու գեղարուեստական արձագանքները: Յատկանշական է նաեւ, որ նկատելի են աղերսներ Մակեդոնեան եւ Կարոլինգեան յուշարձանների հետ, որը պայմանաւորուած է դրանց համար ընդհանուր՝ անտիկ սկզբանաղբերներով: Ուստի կարող ենք ասել, որ Մլքէի մանրանկարների համար որպէս նախատիպ ծառայել է մի որեւէ վաղքրիստոնէական, հաւանաբար ոչ ուշ քան Զ. դ. ձեռագիր, որը բերուել է Հայաստան Բիւզանդիայից: Այդպիսի կենարուն կարող էր լինել եւ՝ Հոռմը, եւ՝ Ռաւեննան, ինչպէս նաեւ չի բացառուում Ալեքսանդրիան: Մեր հետեւութիւնների իրաւացիութեան մասին են վկայում կ. դ. մի շարք հայկական յուշարձաններ, որոնք առնչութիւն ունեն բիւզանդական արուեստի հետ: Այս իմաստով կարեւորում ենք կ. դ. երկրորդ կէսի Արուճի եկեղեցու որմնանկարները, որտեղ խորանի կոնքում պատկերուած է «Քրիստոսը օրէնքներ տուող» (Christus legem dat) յօրինուածքը, որի պատկերագրութիւնը գալիս է բիւզանդական մայրաքաղաքային օրինակներից, մասնաւորապէս Հոռմի սբք. Կողմայի եւ Դամիանոսի խճանկարից (մօտ. 520 թ.): Կարեւոր ենք համարում նշել, որ այս հոռմէական զուգահեռը Ն. Թիերին բերում է նաեւ Մըրենի արեւմտեան մուտքի քանդակների կապակցութեամբ (կ. դ. 40-ական թ.)⁶⁰: Բացի պատկերագրական

⁵⁹ Իմ խորին շնորհակալութիւնն եմ յայտնում Լ. Զուգասպեանին կարեւոր լըրացման համար: Երբ արդէն պատրաստ էր այս նիւթը, Լ. Զուգասպեանը ինձ ծանօթացրեց իր մի յօդուածին, որտեղ անդրադարձ կար ձեռագրի պատուիրատուի խնդրին՝ նշելով, որ հաւանաբար որպէս նախնական պատուիրատուներ Մլքէի աւետարանում նշուած են եղել թագրատունիները, քանի որ Գագիկի առաջին կինը եղել է Մըրատ թագրատունու եղբօր՝ Շապուհի դուստրը: Ուրեմն ձեռագիրը բերուել է Վասպուրական Անիից եւ կապում է Անիի գպրոցի հետ: Այս փաստը միայն հաստատում է այն եղբակացութիւնները, որին յանգել ենք ուսումնասիրութեան արդիւնքում տեսնելով ձեռագիրը որպէս Հայաստանի արեւմտեան մասում ստեղծուած յուշարձան: Տե՛ս Chookaszian L. Remarks on the portrait of prince Lewon (Ms Erevan 8321) // Revue des Etudes Arméniennes. T.25. 1994-1995. P. 311-312.

⁶⁰ Thierry N. La Cathédrale de Mren et sa Décoration // Cahiers Archéologiques. Vol. 21. PP. 44-77. Fig. 26-27.

առանձնայատկութիւններից Արուճի որմնանկարները աչքի են ընկնում գեղարուեստական մեկնաբանութեան առումով եւ հելենիստական աւանդոյթներին յարող գունային համակարգով⁶¹: Այս ամէնը կրկնակի անգամ համոզում է, որ հայ վարպետները ոչ միայն լաւ ծանօթ էին վաղ բիւզանդական յուշարձաններին, այլ նաև ակտիւ կապերի արդիւնքում Հայաստան էին բերւում արուեստի գործեր՝ ձեռագրեր, դեկորատիւ-կիրառական արուեստի նմոյշներ: Հէնց այդպիսի մի ձեռագիր էր հանդիսանում Մլքի աւետարանի չպահպանուած նախատիպը⁶²:

ԶԱՐՈՒՀԻ ՑԱԿՈՐԵԱՆ

**Antique reminiscences in the miniatures
of the Gospel of Queen Mlk'e (862)**

ZAROUHI HAKOPIAN

(summary)

The illustrated Gospel of Mlk'e (Library of the Monastery of San Lazzaro, № 1144) is the earliest dated Armenian manuscript – 862 A. D. There are eleven miniatures that decorate the Gospel - 6 canon tables, a miniature of the Ascension and four portraits of the Evangelists. According to the research there are many antique and early Christian reminiscences in the miniatures of the Gospel that remind early illustrated manuscripts, pavement and sarcophagi. At the same time, there are many points of contact with the monuments of the Macedonian and the Carolingian Renaissance. There is no doubt that the miniatures of the Gospel of Mlk'e followed an early Christian prototype that had been brought to Armenia from Byzantium at an earlier date. At the same time the stylistic, artistic and iconographic features of the miniatures give reason to suppose that the manuscript, created by the Armenian craftsmen, had been copied not in Vaspurakan but in the Byzantine (western) part of Armenia and was moved to Vaspurakan later by the order of King Gagik Ardzruni .

⁶¹ Котанджян Н. Художественный язык Аручской росписи и раннесредневековые фрески Армении // II Международный симпозиум по армянскому искусству. Сб. док. Ереван, 1978. Նոյնի՛ Цвет в раннесредневековой живописи Армении. Ереван, 1978. С. 14-15.

⁶² Շնորհակալութիւն եմ յայտնում Ս. Մանուկեանին այս յօդուածի նախնական քննարկման եւ կարեւոր խորհուրդների համար: